



## 26. ՉՈՐԱՆԻ ՏՂԵՆ

Մի շորան ա ըննում, ունենում ա մի տղա: էս տղեն տենում ա, որ իրա հերը ամեն օր մի հաց ջուրն ա դցում: Համա չի կարում հասկանա, թե ինչո՞ւ ա գցում օրը մի հաց ջրի մեջ:

Սրա հերը մեռնում ա, մնում ա մենակ տղեն: էս տղեն էլ օրը մի հաց գցում ա էն ջուրը, ոնց որ իրա հերը գցում էր իրա սաղ վախտը:

Մի օր էլ մի հաց գցում ա ջուրը ու ինքն էլ հետևից ընկնում ջուրը: Ջուրը քշում ա էս տղին ու հացի հետ մի տեղ տակն ա անում: Ջրի տակին տեսնում ա մի մենձ պալատ շինած ու մեջը մարդիկ են ըննում: Սրանց մին-մին պատմում ա, թե՛ էն հացը մենք ինք դցում: էն վախտը նրան շանց են տալի, որ էթա իրանց թաքավորի մոտ: Թաքավորին էլ մին-մին ասում ա, ինչ որ էլի էր:

Թաքավորն ասում ա.— Չունքի դուք մեզ լավություն եք արել ու ամեն օր հաց եք տվել մեզ, ի՞նչ ես ուղում, ասա՛, որ քեզ տամ:

էնտեղ նրան ասել էին, որ թաքավորը ասի. «Ի՞նչ ես ուզում», գու ասա. «Մի անգամ բերնումս թքի, հերիք ա»:

էս տղեն էլ թաքավորին ասեց.— Մի անգամ բերնումս թքի, էս եմ ուզում:

Թաքավորը էն վախտը ասեց.— Քու սովորցնողի շլինքը կոտորվի, համա ինչ անեմ, շունքի ուզել ես՝ պտի կատարեմ,— ու թքեց մի անգամ նրա բերնում:

Նա էն թավուր շնորհք առավ, որ ամեն լեզու իմանում էր՝ թե ծտի, թե շան, թե օրդակի, թե գելի. մի խոսքով, աշխարքում ինչ թավուր շանավար կար, բոլորի լեզուն հասկանում էր: Ջրի տակից որ դուրս էկավ, տեհավ, որ էրկու ծիտ իրար հետ խոսում են:

Մի ծիտը ասում էր մեկելին.— էս մարդու ձին էգուց կսատկի: էս որ լսեց թե չէ, գնաց ու իրա ձին ծախեց ուրիշի վրա: Աորթ որ մեկել օրը նրա ձին սատկեց:

Մի քանի վախտ անց կացավ, մի օր էլ տեհավ մի շուն կըտրան վրա նստել հաշում ա: էս մարդը հասկացավ, որ նա ասում ա. «էս մարդի եզը էգուց կսատկի ու մենք կէթանք նրա միսը կուտենք»: Վռազ-վռազ գնաց ու իրա եզն էլ ծախեց ու մեկել օրը սատկեց: էսպես էս մարդը իմանում էր, թե իրան ինչ վնաս պտի ըլնի:

